



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

18.05.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 371-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ Գ.ԳԱԼՍՏՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 60/10 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՑԱԾ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑՎԱԾ 111.6ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԵՐԿԿԱՐԿԱՆԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ 0.00508ՀԱ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 2019 թվականի դեկտեմբերի 3-ի «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» թիվ 225-Ն օրենքով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2 կետով, 35-րդ կետի դ) ենթակետով, Հոդային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով Գորիս համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 15-ի թիվ 15-Ա որոշման դրույթները, և քննության առնելով Գորիս քաղաքի բնակիչ Վահե Հարությունյանի 2022 թվականի հունվարի 18-ի թիվ 181 դիմումը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Գորիս քաղաքի Գ.Գալստյան փողոց թիվ 60/10 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման գոտում՝ Վահե Հարությունյանի կողմից ինքնակամ կառուցված, օրինականացված և համայնքային սեփականություն զրանցված երկհարկանի 111.6քմ արտաքին /100.6քմ ներքին/ մակերեսով ավտոտնակը (վկ.N10052022-09-0038)(111.6x1209=134950) մեկ հարյուր երեսունչորս հազար ինը հարյուր հիսուն ՀՀ դրամով, և 0.00508հա մակերեսով սպասարկման հողատարածքը (50,8x1221=62050) վաթսուներկու հազար հիսուն ՀՀ դրամով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարել Վահե Հարությունյանին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:



ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2022/18/05
Բ.Գորիս